ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ, ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ Ծիծեռնակաբերդ

24.04.2022 17:46

ՀՀ փաստաբանների պալատի , Փաստաբանական դպրոցի, Հանրային պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի գլխավորությամբ այցելել են Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, հարգանքի տուրք մատուցել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանը ծաղկեպսակ են դրել հուշակոթողին, ծաղիկներ խոնարհել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի մոտ:

Այս տարի լրանում է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 107-րդ տարելիցը:

Օսմանյան կառավարության կողմից իրականացրած Հայոց ցեղասպանության փաստը հիմնավորվել է, ճանաչվել ու հաստատվել է ականատեսների վկայություններով, օրեքներով, բանաձևերով և բազմաթիվ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների որոշումներով:

Սկսած 1915 թվականից՝ տարբեր պետություններ ընդունել են բանաձևեր, որոնք դատապարտում են հայերի կոտորածը:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })